

ի վնաս հայցուորներուն: Այս էր դատին միտք բանին:

- Ո՞ւր պիտի ներկայացուին դիմումները եւ ինչպիսի պայմաններ պէտք է լրացնեն անոնք:

= Բոլոր ներկայացուող դիմումները պիտի յանձնուին համաձայնագրի գործավարութեան, որու հասցէն նշուած է համաձայնագրի պաշտօնական կայքէջին վրայ: Ուղղորդուած դիմումները այս վերջինս իր կարգին պիտի ղրկէ համաձայնագրի հիմնադրամային յանձնաժողովին, որուն անդամներն են Գալիֆորնիայէն Պերձ Պոյաճեան, Փոլ Գրիգորեան եւ Բժ. Վիգէն Մանճիկեան: Վերոնշեալները այս յանձնաժողովին նշանակուած են Գալիֆորնիոյ նահանգի ապահովագրական բաժանմունքի պետ ձոն Կարամանտի կողմէ: Այս յանձնաժողովը ինք պիտի քննէ իւրաքանչիւր դիմում եւ տնօրինէ իւրաքանչիւր հայցուորի հայցը: Նոյնպէս այն խնդիրները որոնք կը վերաբերին տուեալ պայմանագրի մը դժուր մէկէ ակնհայտ հայցուորներու դիմումներուն պիտի լուծուի գտնեն յանձնաժողովի առած որոշումներու հիմամբ: Ինչպէս, օրինակ, ազգականներու առաջնահերթութիւններ կամ հաւասար իրաւունքներով ներկայացնողներու հարցեր: Պէտք է ըսել որ փաստաբանները որեւէ կապ կամ մասնակցութիւն չունին հայցերու տնօրինման գործին մէջ: Ներկայիս, ըստ մեզի հասած տեղեկութիւններուն, 70-80 հազար մուտք եղած է համաձայնագրի պաշտօնական կայքէջը: Ինչ որ յուսարդել կու տայ որ մեծ թիւով դիմումներ պիտի յղուին մինչեւ 16 Մարտ 2005: Իր կարգին Հայաստանի մէջ արդարադատութեան նախարարութիւնը ձեռնարկած է հայցուորներու դիմումները կազմակերպելու եւ պատշաճ կերպով առաքելու օգտակար գործին: Այս կ'ըսենք ոչ թէ անոր համար որ իւրաքանչիւր հայցուոր կարիք ունի իրաւական խորհուրդի կամ օգնութեան իր հայցը յղելու համար: Այլ, պարզապէս նշելու փաստը նախարարութեան օժանդակութեան: Կրկնութեան գնով ըսենք, որ կայքէջը պէտք եղած ցուցմունքները կու տայ հայցուորին՝ օրինաւոր ձեւով յղելու իր հայցը: Կայքէջը՝

www.armenianinsurancesettlement.com

երկլեզու է՝ անգլերէնով եւ հայերէնով (արեւելահայերէն եւ արեւմտահայերէն):

- Ի՞նչ կ'ընայ պատահիլ եթէ անհրաժեշտ քանակէն նուազ դիմորդներ ըլլան:

= Մեր ցանկութիւնն է անշուշտ որ առաւելագոյն չափով հայցուորներ դիմեն եւ իրենց հատուցումները ստանան. այս քարոզչական արշաւի նպատակը այդ իսկ է: Այն պարագային երբ համաձայնագրի հիմնադրամէն գումարներ աւելնան անոնք եւս պիտի տրամադրուին հայկական բարեսիրական կազմակերպութիւններու: Օրին հայցուորներու փաստաբանները իրենք պիտի առաջարկեն այդ կազմակերպութիւններու անունները եւ դատաւորի հաւանութեամբ փոխանցեն այդ գումարները:

Պէտք է հասկնալ որ այս դատական գործով ձեռք բերուած գումարը Հայկական Յեղասպանութեան հատուցում չէ: Մեր ժողովուրդը դարասկզբին ունեցաւ մարդկային ահաւոր ինչպէս նաեւ նիւթական հսկայ կորուստներ: Այս դատական գործի յաջողութիւնը նիւթական այդ կորուստներու բնագաւառին կը պատկանի եւ հատուցումն է անոր մէկ ջնջին մասին միայն: Փաստ է, որ մեծ թիւով եւրոպական ընկերութիւնները, ըլլան անոնք դրամատուներ, ապահովագրական կամ այլ տեսակի, կազմամիլիոն գործառնութիւն ունէին Օսմանեան կայսրութեան տարածքին անցնող դարասկզբին: Մեր ժողովուրդին հասած պատմական ահաւոր այդ չարիքի հետեւանքները պէտք է տեսնել նաեւ այս բնագաւառին մէջ: Մեր գրասենեակին նպատակն է հաշուետուութեան կանչել բոլոր եւրոպական կամ այլ ընկերութիւնները, որոնք այսպէս կամ այնպէս մասնակից դարձան Յեղասպանութեան աւարին եւ մինչեւ օրս իրենց մօտ պահեցին այն հարստութիւնը, որ իրաւականօրէն կը պատկանի մեր ժողովուրդին:

Միջ-Յրջանային

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍՓԻՌՔԱՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐԷ ԺԱՄԱՆԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՀԵՏ

Լիբանանահայութիւնը այս օրերուն կ'ապրի բեղուն Լպահեր: Համասփիւռքեան Կրթական Համագումարի մասնակից հրաւիրեալներուն մէջ են նաեւ պիւլուքահայ տարբեր օճախներու մէջ գործող Հնչակեան մշակներ: Մեկնելով այս առիթէն, Չորեքշաբթի, 4 Օգոստոսի երեկոյեան Հ.Մ.Մ. ակումբի մէջ տեղի ունեցաւ հանդիպում-հիւրասիրութիւն մը ի պատիւ Լիբանան ժամանած հիւրերուն:



Հանդիպման ներկայ կը գտնուէին Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան անդամներէն՝ պետական երեսփոխան Ընկ. Եղիկ ձէրէճեան, Պէպօ Սիմոնեան, Լիբանանի Շրջանի Ս.Դ.Հ.Կ. Վարիչ Մարմնի ղեկավարութիւնը եւ մասնաճիւղերու վարչութիւններ: Երեկոյի բացման խօսքը արտասանեց Ընկեր Ահարոն Շիրտրեմեան, որ հիւրերուն բարի գալուստ մաղթելէ ետք, գանոնք ծանօթացուց ներկաներուն, ապա իւրաքանչիւրը հրաւիրեց ներկայացնելու գաղութին առօրեան: Առաջին խօսք առնողը եղաւ արժանի նահայ գաղութի ծանօթ ղէմքերէն, կրթական մշակ եւ խմբագիր Ընկեր Սամօ Սարգիսեան: Ան համապարփակ ելոյթով մը զեկուցեց Հարաւային Ամերիկայի գաղութահայ կեանքին շուրջ՝ բնակամբար ծանրանալով կուսակցական գործունէութեան վրայ:

Երկրորդ խօսք առնողը եղաւ Աւստրալիայէն ժամանած «Չանգ» պարբերաթերթի խմբագիր Ընկեր Մանուկ Տէմիրճեան: Ընկերոջ ընդարձակ եւ բովանդակալից զեկուցէն ներկաները տեղեկացան Միջին Արեւելքի ուստաններէն յուրաջ հետաւոր հայկական գաղութներու բոլորած դժուարութիւններուն մասին, ուր հայապահպանումն ու հայեցի դաստիարակութիւնը դարձած են հաւաքական մտահոգութեան առարկայ:

Ապա խօսք առաւ անգլիահայ գաղութի ծանօթ ղէմքերէն, բանաստեղծ, հասարակական գործիչ եւ «Նոր Սերունդի Չանգ» ամսաթերթի խմբագիր Ընկեր Մանուկ Աղամեան: Ընկերը ըսաւ, թէ հայապահպանումն ու կուսակցական աշխատանքը Սփիւռքի համայնակուլ իրականութեան ղէմ կը կարօտին հաւաքական ու միասնական աշխատանքի: Ան ամփոփ կերպով զեկուցեց անգլիահայ գաղութին դիմադրուած դժուարութիւններուն ու հեռանկարներուն շուրջ:

Ներկաները մեծ հետաքրքրութեամբ հետեւեցան զեկուցաբեր ընկերներուն: Հաւաքի աւարտին խօսք առաւ հայկահայ գաղութէն հիւրաբար Պէյրութ գտնուող Ընկերուհի Սիլվա Պեքարեան: Հաւաքը փակուեցաւ «Ուխտի Երգ»-ով, որմէ ետք տեղի ունեցաւ կողիկ հիւրասիրութիւն մը:

«ԱՐԱՐԱՏ» 6 Օգոստոս, 2004

ՀԱՃՆՈՅ ԳԻՒՑԱԶՆԱԿԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Հայ ազգային ազատագրական պայքարի պատմութեան մէջ իր իւրաքանչեւ տեղն ու պատուանդանը ունի Հաճնոյ դիւցազնական հերոսամարտը: Լեռնային Կիլիկիոյ բարձրաբերձ սարերուն թառած Հաճըն աւանը 1920-ին ծառանալով թրքական ուժերուն դէմ՝ փայլուն էջեր կտակեց հայ ազատամարտի պատմութեան դրուագներուն: Յայտօր, ամէն Հոկտեմբեր ամսի կիսուն, աշխարհացրիւ հաճընցիներ կը նշեն իրենց պատմական աւանին պատմական խոյանքը՝ եկեղեցական թէ աշխարհական արարողութիւններով: Ինչպէս ուրիշ հերոսամարտերու պարագային, Հաճնոյ դիւցազնամարտի ոգին եւս կը մնայ առկայ՝ նորահաս սերունդներու մօտ՝ յատկապէս երիտասարդ հաճընցիներու մէջ:

Կիլիկիոյ հայութիւնը, ի տարբերութիւն այլ շրջաններու հայութենէն, գաղթականութիւնը ապրեցաւ երկու անգամ: Առաջինը՝ 1915-ին՝ Մեծ եղեռնին, երկրորդը՝ 1920-ին՝ Կիլիկիոյ պարպումին ժամանակ: Արդարեւ, Կիլիկիոյ հայութեան 1915-ի գանգուածային գաղթէն ետք, երբ Ա. Աշխարհամարտի աւարտին Կիլիկիան յանձնուեցաւ նախ Անգլիոյ եւ ապա Ֆրանսայի, կիլիկահայեր մեծ խանդավառութեամբ վերադարձան իրենց պապենական օժախները, այն չոյսով, որ շուտով Կիլիկիոյ մէջ հայութիւնը կ'ունենայ անկախ պետականութիւն կամ թէկուզ ենթակա պետութիւն՝ ֆրանսական հոգատարութեան տակ: Կիլիկահայեր, որպէս Դաշակից Ուժերու հաւատարիմ զինակիցներ, կը կարծէին, թէ դաշակիցներ անդրուժան գտնուելով՝ վարձահատոյց կ'ըլլան իրենց անմնացորդ գոհաբերութիւններուն եւ հաստատուելով Կիլիկիա, վայելելով Ֆրանսայի հովանաւորութիւնը, ձեռք կը ձգեն այնքա՞ն թանկագին իրենց անկախութիւնը: 1918-1920 թուականներու Կիլիկիոյ հայութեան ապրած ողբերգութիւններն ու յուսախաբութիւնները, մարտնչումներն ու դառնութիւնները, պոթիկումներն ու թշուառութիւնները, իրօք կը կազմեն մեր ողբերգագոյնամասին ամենակիզիչ էջերը: Աւելին, 1920 Օգոստոս 4-ին, Կիլիկիա կը հռչակուէր անկախ հայկական պետութիւն, նախարարական կազմով, բայց... մի քանի ժամուան համար...:

Այնուամենայնիւ, 1918-ին հազարաւոր հայեր սուրիական անապատներէն վերադառնալով Կիլիկիոյ իրենց պապենական տունները, կը սկսին վերաշինել իրենց օժախները ամենայն լաւատեսութեամբ եւ ապագայի պայծառ յոյսով: Սակայն, հետզհետէ դրութիւնը կը վատթարանայ, երբ մէկ կողմէ քեմալական զօրքեր ու չէթէներ կը սկսին օղակել Կիլիկիոյ հայկական քաղաքները եւ միւս կողմէ Ֆրանսան կը սկսի վարել անձնատուական քաղաքականութիւն՝ դարպասելու համար նոր հզօրացող քեմալական թուրքիան: Փաստօրէն, ռազմական ու քաղաքական պայմանները աստիճանաբար կը գահավիժին ի հեճուկա Կիլիկիոյ հայութեան եւ անոր անկախական երազներուն:

Այսպէս, դէպքերու ժխտական զարգացումներուն որպէս հետեւանք, 1920-1921 թուականներուն Կիլիկիոյ հայութիւնը հարկադրուած երկրորդ անգամ ըլլալով կը լքէ իր դարաւոր բնօրրանը եւ անգամ մը եւս գաղթականի ցուպը ձեռքին կը տարտղնուի աջ ու ահեակ: Հակառակ անոր, Կիլիկիոյ կարգ մը քաղաքներ կը դիմեն ինքնապաշտպանութեան՝ հերոսական դրուագներ ու օրինակելի խոյանքներ պարգեւելով գալիք սերունդներուն: Ինքնապաշտպանական մարտեր տեղի կ'ունենան մանաւանդ Մարաշի, Անթիպի եւ Հաճնոյ մէջ:

Հաճըն (նախկին անունով՝ Հարգան) կը գտնուի Կի-

լիկիոյ հիւսիսը՝ Տաւրոսեան լեռներու ծոցին: Հայեր հոն բնակած են հին ժամանակներէն: 12-14-րդ դարերուն մաս կազմած է Կիլիկիոյ հայկական պետութեան: 15-րդ դարուն կը միանայ Օսմանեան Կայսրութեան: Նախաեղեռնեան շրջանին քաղաքը ունէր շուրջ 30 հազար բնակչութիւն՝ գլխաւորաբար հայեր, որոնք կը զբաղէին արհեստներով եւ առեւտրով:

Ունէին վեց եկեղեցի ու վարժարաններ (նշանաւոր էր Սահակ-Մեսրոպեանը): 1915-ի Մեծ եղեռնին Հաճնոյ հայութիւնը կը տարագրուի սուրիական անապատ՝ Տէր Զօր, ուր մեծ մասը զոհ կ'երթայ սովին ու երաշտին: Կիլիկիեան ֆրանսական հոգատարութեան յանձնուելէն յետոյ, մահուան ժանիքէն մազապուրծ փրկուած շուրջ 7 հազար հայեր 1919-ին կը վերադառնան Հաճըն՝ վերահաստատելու իրենց բոցն ու վերաշինելու աւերուած տունները: Կեանքը հազիւ սկսած էր դառնալ բնական, երբ թուրք-ֆրանսական զաղտնի համաձայնութեամբ Հաճընը կը յանձնուի թուրքիոյ: 1920-ի սկիզբներուն, նոր կոտորածի ու տեղահանութեան նախանշանները կը սկսին յայտնուիլ, երբ Հաճըն լուրեր կը հասնին Կիլիկիոյ այլ շրջաններու մէջ պատահած հակահայ իրադարձութեանց մասին: Աւելին, Մարաշի հայութեան ինքնապաշտպանութիւնն ու կոտորածը ծանր տպաւորութիւն կը ձգէ մերձակայ Հաճնոյ վրայ, որուն բնակչութիւնը կը նախզգայ մօտալուստ զարգացումներուն ծանրութիւնը եւ հետեւաբար կը սկսի ինքնապաշտպանութեան նախապատրաստական աշխատանքներու: Մարաշը ահագանգ մըն էր Հաճնոյ՝ դիմելու գէնքին ու ինքնապաշտպանութեան բնագրին:

Հաճնոյ ինքնապաշտպանութեան պարտականութիւնը, ընդհանուր առմամբ, կը ստանձնեն Հնչակեանները: Տեղին է նշել, որ Կիլիկիոյ մէջ Ս.Դ. Հնչակեան Կուսակցութիւնը ամենաազդեցիկ ու հեղինակաւոր հայ քաղաքական-յեղափոխական կազմակերպութիւնն էր: Այդ ժամանակ Հաճնոյ քայմաքամն (կուսակալ) էր Հնչակեան Կարապետ Չալեանը, իսկ Առաջնորդը՝ Պետրոս Եպս. Սարաճեան (Կիպրոսի Առաջնորդ՝ 1899-1905 եւ 1920-1939, ապա՝ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ), որոնք եւս կը ներգրաւուին ինքնապաշտպանութեան գործին:

1920 Մարտին քեմալական ուժեր կը պաշարեն Հաճընը՝ քաղաքը գրկելով արտաքին աշխարհի հետ կապէն: Հայեր զգալով վերահաս վտանգը կը կազմեն Հաճնոյ ինքնապաշտպանութեան բարձրագոյն խորհուրդ՝ ղեկավարութեամբ Կ. Չալեանի, խորհուրդին նախագահը կ'ըլլայ Պետրոս Եպս. Սարաճեան, պաշտպանութեան ուժերուն հրամանատար կը նշանակուի սպայ, Զօր. Անդրանիկի զինակից՝ հեծելազօրի վաշտապետ, Հնչակեան Սարգիս Ճէպէճեանը (1920 Յունիսին կը վիրաւորուի ազդրէն եւ որպէսզի չիջնայ թրքական զօրքին ձեռքը՝ աւելի ուշ ինքնասպան կ'ըլլայ): Հաճընցիներ կը կազմաւորեն 4 վաշտ, 60 հօգիէ բաղկացած հեծեալներու խումբ. ինքնապաշտպանութեան վաշտերուն կը հրաւիրուին 16-50 տարեկան գէնք կրելու ընդունակ տղամարդիկ (շուրջ 1200 հօգի): Կը կազմաւորուին ինքնապաշտպանութեան գործին օժանդակ մարմիններ, ինչպէս՝ Կարմիր Խաչ, թիկունքային միաւորներ, շտապ մարմիններ. սակայն, զգալի էր ռազմամթերքի սակաւութիւնը (հրացան, ռումբ): Հաճըն եւ շրջակայքը կը բաժնուին չորս շրջանի, կը փորուին խրամատներ ու կը կառուցուին դիրքեր: Զօրաշարժի կ'ենթարկուի ամբողջ բնակչութիւնը՝ անդրադառնալով պահին լրջութեան՝ կ'ապաւինի սեփական ուժերուն:



Քեմալական բանակի հրամանատար Քոզանօղլի Տոզան չուգբեյով դիմակալել հաճընցիներու դիմադրութիւնը կը փորձէ խաբէութեամբ ծունկի բերել զանոնք՝ դիմելով բանակցութեան եւ անձնատուութեան ընտրանքին: Հաճընցիներ առաջին իսկ առաջարկին կը մերժեն թրքական այդ ընտրանքը: Թուրքեր Մարտ 28-ին կը ներկայացնեն վերջնագիր՝ ընդգծելով, որ իրենց թշնամին ֆրանսացիներն են եւ հետեւաբար հայեր պէտք է յանձնուին, քանի գերծ պիտի մնան կոտորածէ: Հաճընցիք կը մնան անդրդուելի:

1920 Ապրիլ 1-ին թրքական ուժեր կանցնին յարձակումի, անոնք կը գրաւեն քաղաքին հիւսիս-արեւելքը գտնուող ամերիկեան «Փորտ» ընկերութեան շէնքերը: Մինչ քաղաքը կը ումբակոծուէր, Ապրիլ 3-ին թուրքեր կը սեղմեն պաշարման օդակը, Ապրիլ 10-ին թուրքեր կը գրոհեն Գոփուշ կոչուող թաղամասին վրայ: Ապրիլ 12-ին՝ Կիլիկիա թաղամասին եւ Ս. Յակոբ վանքին ուղղութեամբ, անոնք կը յաջողին գրաւել վանքը: Կատողի մարտեր տեղի կ'ունենան Ապրիլ 30-ին, Մայիս 20-23-ին, Յունիս 8-9-ին եւ 25-ին, Յուլիս 12-13-ին: Յուլիսին, թուրքեր յարձեւալ կը դիմեն բանակցութեան ոճին՝ նոյն խաբէութեամբ, բայց՝ ի գուր:

Հաճընցիք կը մարտնչէին միայնակ. թուրք-ֆրանսական համաձայնութենէն եւ քաղաքական սիրաբանութենէն ետք, ֆրանսական ուժեր ոչ միայն մնացին ձեռնաձալ, այլ՝ խափանեցին նոյնիսկ այլ քաղաքներու մէջ կազմաւորուած հայկական ջոկատներուն երթը Հաճընի ուղղութեամբ եւ Հաճընին օգնութիւն փութալու առնչութեամբ: Ատանայի մէջ կազմուած կամաւորականներու ջոկատը ցրուեցաւ ֆրանսական ճնշումով. Միսի մէջ Ասատուր Սաչեանի կամաւորներու գունդին արգիլուեցաւ շարժիլ Հաճընի ուղղութեամբ, փաստօրէն, Հաճընի պաշարումը կը շարունակուէր նոյնինքն ֆրանսական մեղաակցութեամբ: Այս բոլորէն անտեղեակ եւ իրենց քաղաքին մէջ օդակուած հաճընցիք անընդհատ դիմումներ կ'ընէին ֆրանսացիներուն ռազմական օգնութիւն խնդրելով անոնցմէ: Օր մըն ալ սաւառնակ երեւցաւ Հաճնոյ վերեւ. ֆրանսական սաւառնակ. ի՞նչ խաչտանք. հաճընցիք կարճեցին, թէ ֆրանսացիներ վերէն հրացաններ ու օգնութիւն պիտի բաշխեն հաճընցիներուն, սակայն, ինչ որ բաշխեցին սաւառնակէն՝ հասաւ թուրքերուն՝ խոր հիասթափութեան մատնելով պաշարեալները՝ որոնք կը մղէին մահու կեանց պատերազմ՝ Տաւրոսի լեռներուն կառչած: Այս առիթով է, որ հաճընցիք տխուր երգ մը ունին, որուն խորագիրն է «Օդանաւն եկաւ, Մեծ Աւետիսով»:

18 Յուլիսին, բախումներու ընթացքին, ազդրէն կը վիրաւորուի ինքնապաշտպանութեան ղեկավարը՝ Ս. Զէպէճեան, որ կուրը կը շարունակէ կաղ վիճակով: Օգոստոս 5-6-ին հայեր կանցնին հակազրոհի՝ խուճապի մատնելով թշնամին: Կայծակ Արամ (Թերզեան) 200 կամաւորներով անհանգստութեան կը մատնէր պաշարող զօրքը: Սեպտեմբեր 20-ին անոնք նոյնիսկ կրցան գրաւել Ռուժլու գիւղը:

20 Օգոստոսին Հաճըն կու գան նոր սուրհանդակներ, որոնք կը հաղորդեն, թէ շուտով օգնութեան կու գան Ախարձալի մէջ համախմբուած 300 կամաւորներ, որոնք զինուած են ամերիկահայերու եւ եգիպտահայերու աջակցութեամբ: Սակայն, ֆրանսական զօրքերը կը կտրեն անոնց ճանապարհը, զինաթափ կ'ընեն կամաւորները եւ զանոնք կը հեռացնեն Կիլիկիայէն: «Ասպետական» ֆրանսան անգամ մը եւս ցոյց կու տայ իր նենգ էութիւնն ու թրքասէր քաղաքականութիւնը:

Օգոստոս-Սեպտեմբեր ամիսներուն Հաճնոյ դրութիւնը կը ծանրանայ. 14 Օգոստոսին թուրքեր կը կազմակերպեն նոր յարձակում. անոնց կը յաջողուի ձեղքել պաշտպանութեան գօտին եւ մտնել քաղաք. հայեր կը տառապէին անդամ թերքի եւ ռազմամթերքի պակասէն: Քաղաքէն ներս տեղի կ'ունենան կատաղի մարտեր: Թուրքերը վճռական հարուած կու տան Հոկտեմբեր 14-ին. քաղաքը կ'ենթարկուի հրետակո-

ծուլթեան. կ'աւերուին տուներ ու դիրքեր. հարիւրաւոր մարտիկներ կ'իջնան պատնէշի վրայ: Հոկտեմբեր 15-ին կը հրկիզուի քաղաքը. կը կոտորուին շուրջ 6000 բնակիչները, որոնց շարքին մանուկներ, ծերեր ու վիրաւորներ: Միայն 365 հոգիի կը յաջողուի դուրս գալ քաղաքէն եւ ապաստանիլ աւելի ապահով վայրեր: Հոկտեմբեր 15-ին Կիլիկիոյ Հնչակեան արքան՝ «Տաւրոս»-ը (լոյս կը տեսնէր Ատանա) մեծ խորագիրով կը գրէ. «Հաճըն Ոչ եւս է...»:

Նկատի առնելով որ Հաճըն կը թառէր Տաւրոսի բարձունքներուն, անոր բնակիչները արծիւներու նման կը տենչային ազատութիւն եւ ինքագիտօրէն հարուածեցին թուրք ոստիներուն, մեր գրականութեան ու պատմութեան մէջ ան կը կոչուի «Արծուբերոյն Հաճըն»:

Շուրջ ութամսեայ մաքառումէն ետք Արծուբերոյն Հաճնոյ բնակիչներն ու նախապէս անկէ դուրս գտնուող հաճընցիներ յետագային ցրուեցան աշխարհով մէկ: Անոնցմէ շատեր հաստատուեցան Հարաւային Ամերիկա (Արժանթին, Ուրուկուէյ), ուր հրատարակեցին «Նոր Հաճըն» հայրենակցական պարբերականը: Պէջրութ հաստատուողներ հիմնեցին Նոր Հաճըն թաղամասը, որ շեշտուած է իր Հնչակեան դիմագիծով, ուր կառուցեցին Ս. Գէորգ եկեղեցին ու Սահակ-Մեսրոպեան վարժարանը (այժմ փակ): Հայաստանի մէջ, Երեւանէն հիւսիս գտնուող վայրի մը մէջ հաճընցիներ հիմնեցին Նոր Հաճըն սաւառ, ուր կանգնեցուցին յուշարձան ու հաստատեցին թանգարան: Ամէն տարի Հոկտեմբերի կիսուն Արծուբերոյն Հաճնոյ հերոսական ոգին անգամ մը եւս կը սաւառնի աշխարհասփիւռ հաճընցիներու սիրտերուն ու հոգիներուն վերեւ:

Հաճըն այժմ կը կոչուի Սաչիմայէլի (Սաչիմ Պէյ կը կոչուէր այն թուրք բրամանայէլի, որուն բանակայինները գրաւեցին քաղաքը). Սաչիմ Պէյի արձանը կանգնած է Հաճնոյ հրապարակին վրայ, որուն պատուանդանին գրուած է, թէ ան քաղաքը «ազատագրեց ֆրանսացի եւ հայ կեաւորներէն»: Հաճնոյ թուրք բնակիչները (աւելի բունագրաւիչները) առ այսօր իրենց սրտերուն մէջ կը պահպանեն հակահայ մարդ մը, որովհետեւ իրենց պապիկներէն իմացած են, թէ այդ հայ լեռնականները ինչպիսի՞ դիւցազնական ոգիով ոգորեցան թրքական վիթխարի ուժերուն դէմ: Հայոց հարուածները ցայսօր ցաւ կը պատճառեն թշնամիին:

Փա՛ռք ու պատի՛ւ հայ հարուածող բազուկին՝ Հաճնոյ մէջ թէ՛ այլուր: Յարգա՛նք Հաճնոյ հերոսամարտի զոհերու 84-ամեայ յիշատակին:

ԱԽԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ

ՀԱՃՆՈՅ ԳՈՅԱՄԱՐՏԻՆ ԵՐԳԸ

Օդանաւն եկաւ մեծ աւետիսով,
 Մեր սրտերն լեցաւ ուրախ յոյսերով,
 Թափ առին բոլոր մանուկներն անպէն,
 Անոնք ոգետր, թիւրք ջարդել կ'ուպէն:

Եղբարք Ատանայէն նամակ գրեցին,
 Կուուեցէք քաց դուք, կը հասնինք ըսին,
 Սակայն ի՞նչ խաբկանք, օրերը անցան,
 Հապար հոգիէն երկուք չերեւցան:

Ապրիլ կամ մեռնիլ վճոյց Հաճընցին,
 Գրաւենք ըսին՝ թէկուպ առանջին,
 Գրաւենք քանդիչ թնդանօթն ահեղ.
 Թող յաղթանակ մը տանինք փառատր:

Թէ գերի՞ ապրինք, ապրի՞նք մեր մահով,
 Թէ պիտի մեռնի՞նք, իյնանք սուրբ մահով,
 Սովին ու ցուրտին ամէն սրկանքին՝
 Այլեւս հանդուրժել երկար չենք կրնար:

ՆՈՒԱՐԳ Ա. ԱՍՊԵՏ

ՄԻՏՆԻԻ ՄԷՋ ՄԵԾ ՇՈՒՔՈՎ ՆՇՈՒՆՅԱԻ ՔՍԱՆ ԿԱՒԱՐԱՆՆԵՐՈՒ 88ՐԴ ԱՄԵԱԿԸ

Ո՛չ ձեռով եւ ո՛չ ալ խորքով տարեկան սովորամոլ հանդիսութեան մը երեւոյթը ունէր Հնչակեան Քսան Տիտաններու նահատակութեան 88րդ ամեակի ոգեկոչումը, որ տեղի ունեցաւ Կիրակի, 20 Յուլիսի երեկոյեան, «North Ryde Community Aid Info. Centre»-ի սրահին մէջ: Հովանաւորութեամբ Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տէր Ադան Արքեպիսկոպոս Պալիօզեանի եւ կազմակերպութեամբ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Աւստրալիոյ Շրջանի: Որպէս գլխաւոր բանախօս՝ Դամասկոսէն հրաւիրուած էր Ընկ. Տիրան Ակինեան, Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան Ատենապետ, որ կուռ ճառով մը վեր առաւ 20 կախաղաններու մարտիրոսացման հետ կապուած բազմաթիւ հարցեր, խոր վերլուծման ենթարկելով այդ երեւոյթի քաղաքական, ազգային-հասարակական եւ գաղափարական տարողութիւնները, յատկապէս անոնց պատգամին անդրադարձը այսօրուայ մեր սփիւռքեան եւ հայաստանեան իրականութեան:

Ոգեկոչման մեծաշուք մթնոլորտը, արտասանուած հոգեբուխ խօսքերը, ներկայացուած պատմական վկայակոչումները ու յայտարարին ընդմէջէն փոխանցուած ապրումներն ու հասարակութեան լուռ խորհրդածութիւնները ինքնին հանդիսացան կենդանի վկայութիւնը այն ճշմարտութեան որ ողջ են Քսանները՝ իրենց մարգարէաշունչ պատգամներով, անժամանցելի գաղափարականով, իմաստուն նախատեսութիւններով ու պատմական դիրքորոշումներով եւ ազգային այնպիսի յանձնառութեամբ մը՝ որուն կենսագործումին ի խնդիր Փարմազ ու իր ընկերները չվարանեցան նուիրագործելու իրենց կեանքը:

Սոյն ոգեկոչումը Քսաններու նահատակութենէն 88 տարիներ ետք՝ հանդիսացաւ շօշափելի փաստը այն իրողութեան որ ոչ միայն անմահ է Անոնց գաղափարականը՝ այլ տարիներու թաւալումին հետ պիտի ծաւալի ու տակաւ հզօրանայ մինչեւ իրագործումը Անոնց սրբազան տեսիլքին:



Ոգեկոչումը սկսաւ Կիրակի առաւօտեան, Սիտնիի Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած հոգեհանգստեան արարողութեամբ ի յիշատակ Հնչակեան 20 նահատակներուն: Օրուայ Սուրբ Պատարագին եւ արարողութեան ներկայ էր Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան Ատենապետ՝ Ընկ. Տիրան Ակինեան ընկերակցութեամբ իր տիկնոջ՝ Ասողիկին եւ Աւստրալիոյ Վարիչ Մարմնի ներկայացուցիչ եւ Շրջանի ընկեր-ընկերուհիներով:

Երեկոյեան, մեր հերոս նահատակներու յիշատակը յարգելու հիւրերու շարքին եկած էին Արժանապատիւ Տէր Նորայր Քասանայ Բաթանեան, Սիտնիի Սուրբ Յարութիւնը Եկեղեցւոյ Վարչութեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ռամկավար Ազատական Կուսակցութեան եւ Հ.Բ.Ը.Մ.-ի ներկայացուցիչներ



Հիր բանախօս՝ Ընկ. Տիրան Ակինեան

ինչպէս նաեւ գաղափարի ուխտեալ ընկերներ եւ համակիրներ:

Յայտագիրը սկսաւ յաջորդաբար Հայաստանի եւ Ս.Դ.Հ.Կ.ի քայլերգներուն յտնկալս ունկնդրութեամբ, որմէ ետք, օրուան հանդիսավար ընկեր Վաչէ Թօփուզեան հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան յտնկալս լուռութեամբ յարգելու Քսաններուն յիշատակը: Իր բացման խօսքին մէջ ընկերը անդրադարձաւ Քսան Կախաղաններու սիրանքին, անոնց քաղաքական ու պատմական դերին՝ հայ ժողովուրդի պատմութեան մէջ: Ան ընդգծեց Քսաններուն կախաղանումին քաղաքական դրդապատճառները, շեշտելով, թէ՛ Հնչակեան կուսակցութիւնը եղաւ հայ ժողովուրդի քաղաքական հեռատես միտքը, ամենամարտունակ ուժը եւ հատու բազուկը: Ընկերը Քսանները նկատեց ոչ թէ միայն Հնչակեան կուսակցութեան պանծալի դէմքերը, այլ՝ հայ ժողովուրդի պայծառանուն տիտանները: Անդրադառնալով ներկայ իրավիճակին ընկերը ըսաւ. - «Քսանները պայքարեցան ու նահատակուեցան յանուն իրենց ժողովուրդի, հայ անհատի ապահով, արդիւնաբեր ու բարոյական կեանքի բարելաւումին, օսմանեան տիրապետութեան ներքէ: Արդարեւ, անոնց պատգամն է այսօր, մեր ազատ հայրենիքէն ներս, ամէն բանէ վեր դասել մեր ժողովուրդի շահերը եւ հոգեկցաբար ստեղծել այն բոլոր նպաստաւոր պայմանները, որոնք պիտի ապահովէին մարդավայել կեանք մը հայ մարդուն: Եւ մենք կը հաւատանք, որ կան կարելիութիւններ, անշուշտ, եթէ գտնուին ժողովրդավար իշխանաւորներ, ժողովուրդով մտահոգ առաջնորդներ, 20-ներու օրինակով անձնուրաց հայրենասիրութեամբ կառավարիչներ...: Ս.Դ.Հ.Կ.ի նահատակութեան Քսաններու մարտիրոսացման գաղափարաստութիւնը, այսօրուան պիտի սկսուի, կը պահէ իր այժմեականութիւնը, որ կ'ամփոփուի գլխաւորաբար հետեւեալ երեք առաջադրանքներու մէջ. տէր կանգնիլ մեր ժողովուրդին, ստեղծելով մեր հայրենիքէն ներս կարելի այն բոլոր անհրաժեշտ համարուած ընկերային պայմանները, որոնք սատար կրնան հանդիսանալ անոր ֆիզիքական, իմացական ու ընկերային բարձր յատկանիշերուն պահպանման ու զարգացման. ըստ հնարաւորի, զարկ տալ մեր երկրի արդիւնաբերական կեանքին, կարենալ ամբացնելու համար մեր երկրի անկախութիւնը պահպանող արդիւնաբերական, ժողովրդավարական, կառուցները. ստեղծել ուժեղ ազգային միասնութիւն, կարենալ միասնաբար դիմադրուելու եւ բարոք լուծում տնօրինելու համար մեր ազգային հիմնահարցերուն, ի փառս մեր զոյգ հայրենիքներուն՝ Հայաստանի եւ Ղարաբաղի հանրապետութիւններուն եւ մեր մէկ ու ամբողջական փառապանծ ժողովուրդին:»

Այնուհետեւ, խոշոր պաստառի վրայ ներկայացուեցաւ 20-ներուն նուիրուած յատուկ վաւերագրական յայտագիր մը, պատրաստուած Ս.Դ.Հ.Կ. Աւստրալիոյ